

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատումը վերացնելու և սոցիալական, տնտեսական և մշակութային հիմնական իրավունքները մարդու հիմնական իրավունքների գլխում ամրագրելու մասին առաջարկ

2015 թ. խմբագրմամբ Սահմանադրության 2-րդ գլխից մի շարք սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներ հանվեցին և մասնակիորեն ամրագրվեցին Սահմանադրության 3-րդ գլխում՝ որպես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքներ և պետության քաղաքականության հիմնական նպատակներ: Այդ իրավունքներն էին սոցիալական ապահովության, առողջության պահպանման, արժանապատիվ գոյության, նվազագույն աշխատավարձի և աշխատանքի բավարար պայմանների, բնակարանի, մշակութային կյանքին մասնակցելու իրավունքները: Որոշ սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներ էլ, որպիսիք էին բավարար կենսամակարդակի և գիտության նվաճումներից օգտվելու իրավունքներն առհասարակ հանվեցին Սահմանադրության տեքստից: Այս փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 2-րդ գլխից հանված իրավունքները դադարեցին «հիմնական իրավունքներ» համարվելուց, նրանք այլևս չունեն անմիջական գործողություն, և անձինք և Մարդու իրավունքների պաշտպանը զրկվեցին այս իրավունքների սահմանադրականության ստուգման հնարավորությունից: 2015 թ. սահմանադրական փոփոխությունները, այսպիսով, հետընթաց էին սոցիալական, տնտեսական և մշակութային հիմնական իրավունքների սահմանադրական երաշխիքների ամրագրման տեսանկյունից: Այդ մասին են վկայում իրավաբանական համայնքի մի շարք ներկայացուցիչների, հայաստանյան քաղաքացիական հասարակության և միջազգային մասնագիտացած տարբեր կառույցների գնահատականները¹:

Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատման վերաբերյալ հիմնավորումները տեղ են գտել 2015թ. սահմանադրական փոփոխությունների հայեցակարգում².

1. իրավունքների անմիջական գործողության ապահովման համար անհրաժեշտ է տարանջատել «դասական հիմնական իրավունքները» «սոցիալական հիմնական իրավունքներից» և «պետության նպատակներից» անմիջական գործողության ու դատական պաշտպանության ընթացակարգեր ապահովել «դասական հիմնական իրավունքների» համար:
2. Անհրաժեշտ է վերանայել սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի իրացման երաշխիքները, ինչը կրկին պայմանավորված է «դասական հիմնական իրավունքների», «սոցիալական հիմնական իրավունքների» և «պետության նպատակների» տարանջատմամբ:
3. Անհրաժեշտ է սահմանադրական մակարդակով ամրագրել հիմնական իրավունքների սահմանափակումներին ներկայացվող պահանջները,

¹ Տես, մասնավորապես, ՄԻՀԿ-ի հետազոտությունը.

https://www.rightsresearch.net/files/ugd/f1a9eb_be91ea375c7948e190d80df59d1a5cdc.pdf?index=true, նաև մի խումբ հայ փաստաբանների մասնակցությամբ պատրաստված տեսանյութը՝ Փաստաբաններն ասում են՝ ՈԶ՝ <https://www.youtube.com/watch?v=q8Vuz-7CTsE>

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014 թ., <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>:

մասնավորապես օրենսդրի հայեցողությունը սահմանափակող՝ իրավունքների էության անխախտելիության, համաչափության և որոշակիության սկզբունքները, որոնք ևս կիրառելի են միայն «դասական հիմնական իրավունքների» նկատմամբ:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ամրագրված են ՀՀ-ի կոդմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում (այսուհետ՝ նաև Դաշնագիր):

Դաշնագրի դրույթներով տնտեսական, սոցիալական և մշակութային հիմնական իրավունքներն են աշխատանքի իրավունքը³, արդար և նպաստավոր աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքը⁴, արհմիություններ կազմելու և արհմիությունների միանալու իրավունքը⁵, սոցիալական ապահովության իրավունքը⁶, ընտանիքի պաշտպանության իրավունքը⁷, բավարար կենսամակարդակի իրավունքը⁸, ֆիզիկական և հոգեկան առողջության հասանելի ամենաբարձր ստանդարտի իրավունքը⁹, կրթության իրավունքը¹⁰ և մշակութային կյանքի և գիտական առաջընթացի առավելություններից օգտվելու իրավունքը¹¹: Իրավունքների այս խումբն ըստ էության համարվում է մարդասիրական և նպատակ ունի մարդուն ապահովելու իր գոյութենական հիմնական կարիքները բավարարելու իրավունքով, ինչը թույլ կտա մարդուն արժանապատիվ կյանքով ապրելու, քանի որ աշխատագուրկ, քաղցած, տկար, անտուն, տգետ և աղքատ մարդը չի կարող խոսել մարդուն ներհատուկ արժանապատվությունից¹²: Այսպիսով՝ իրենց ներքին բնույթով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները «ենթադրում են սոցիալական ինտեգրում, համերաշխություն և հավասարություն և առնչվում են եկամտի բաշխման հարցին... ինչը անհրաժեշտ է մարդու արժանապատվության և զարգացման համար»¹³: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները շատ կարևոր հիմնական իրավունքներ են, և «որևէ մեկը չի կարող լիարժեքորեն կամ առհասարակ իրականացնել որևէ իրավունք, որը ենթադրաբար պաշտպանված է հասարակության կողմից, եթե չունի առողջ կյանքի համար ողջամտորեն անհրաժեշտ հիմնական միջոցներ»¹⁴:

Ի տարբերություն քաղաքացիական և քաղաքական իրավունքների, որոնք ավանդաբար համարվում են «առաջին սերնդի» իրավունքներ՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները համարվել են «երկրորդ սերնդի» մարդու իրավունքներ՝ հաշվի առնելով, որ իրավունքների

³ ՏՄԽԴ, 6-րդ հոդված:

⁴ ՏՄԽԴ, 7-րդ հոդված:

⁵ ՏՄԽԴ, 8-րդ հոդված:

⁶ ՏՄԽԴ, 9-րդ հոդված:

⁷ ՏՄԽԴ, 10-րդ հոդված:

⁸ ՏՄԽԴ, 11-րդ հոդված:

⁹ ՏՄԽԴ, 12-րդ հոդված:

¹⁰ ՏՄԽԴ, 13-րդ և 14-րդ հոդվածներ:

¹¹ ՏՄԽԴ, 15-րդ հոդված:

¹² J. K. Mapulanga-Hulston, "Examining the Justiciability of Economic, Social and Cultural Rights" (2002) 6 The Intl Law of Human Rights No 4, 29-48-րդ էջեր:

¹³ Նույն տեղում:

¹⁴ H Shue, *Basic Rights: Subsistence, Affluence and US Foreign Policy* (1979), 24-25 էջեր:

այս խումբն ավելի ուշ է հայտնվել պետությունների սահմանադրություններում¹⁵:

2020թ. ՀՀ-ն վավերացրել է նաև Դաշնագրի լրացուցիչ արձանագրությունը,¹⁶ որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր տնտեսական, սոցիալական և մշակութային բոլոր իրավունքների խախտման դեպքում ներպետական ատյաններն սպառելուց հետո կարող է դիմել ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին (այսուհետ՝ նաև Կոմիտե):

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածն ամրագրում է անդամ պետությունների պարտավորությունը «պրոգրեսիվ կերպով հասնելու Դաշնագրում ճանաչված իրավունքների լիարժեք իրականացմանը բոլոր պատշաճ միջոցներով, այդ թվում՝ օրենսդրության ընդունմամբ»: Այս բավական անօգուտ տերմինաբանությունը հանգեցրել է նրան, որ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին վերաբերվել են որպես երկրորդ կարգի իրավունքներ:

Այս իրավունքների դեմ առաջին հիմնական փաստարկը, հատկապես որոշ արդյունաբերական երկրների կողմից հիմնականում այն է եղել, որ ի տարբերություն քաղաքացիական և քաղաքական իրավունքների՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները մարդու «իրական» իրավունքները չեն, այլ՝ «հասարակական նպատակներ» են, որոնք պետք է սահմանվեն պետության սոցիալական ոլորտի քաղաքականությամբ¹⁷: Սակայն Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի՝ որպես մարդու իրավունքների միջազգային պայմանագրի ընդունմամբ և ուժի մեջ մտնելով այդ պետությունները ենթադրաբար պետք է մի կողմ թողնեին այդ գործընթացին նախորդող իրավական փաստարկներն այն մասին, որ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները որպես այդպիսիք մարդու իրավունքներ չեն¹⁸:

Երկրորդ փաստարկն այն է, որ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ընկալվել են որպես անորոշ և դատական վիճարկման չենթակա, և այսպիսով դրանցով հնարավոր չէ պետության նկատմամբ պահանջներ ներկայացնել նույն կերպ, ինչ քաղաքացիական և քաղաքական իրավունքների պարագայում: Մինչ իսկապես առկա է անորոշություն և կոնցեպտուալ հստակության պակաս, ակադեմիական շրջանակներում առկա է նաև այն տեսակետը, որ այդ անորոշությունը ներհատուկ չէ միայն տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին. տարբերությունը գուցե այն է, որ քաղաքացիական և քաղաքական իրավունքները ավելի լավ են բացված¹⁹: 1989թ. ի վեր Կոմիտեն իր

¹⁵ K Vasak, "Human Rights, A Thirty Years Struggle", (1977), UNESCO Courier, 29-32-րդ էջեր:

¹⁶ Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրություն, http://www.parliament.am/draft_docs7/K-608_ardzanagrutyun.pdf:

¹⁷ Տե՛ս հարցի քննարկումը Դ. Հարիսի մոտ. D.J. Harris, Cases and Materials o International Law (6th edn, Sweet and Marwell, 2004), 655-րդ էջ:

¹⁸ P. Alston, "US Ratification of the Covenant on Economic, Social and Cultural Rights: The Need for an Entirely New Strategy" 84 AJIL 367 (1990), 158-րդ էջ:

¹⁹ P. Alston, "The Committee on Economic, Social and Cultural Rights" in p Alston (ed), The United Nations and Human Rights: A Critical Appraisal (1992), 490-րդ էջ:

Ընդհանուր մեկնաբանություններում կոնցեպտուալ հստակություն մտցրել է Դաշնագրում ամրագրված տնտեսական, սոցիալական և մշակութային մի շարք իրավունքների բնույթի և ծավալի հարցում²⁰: Առավել կարևոր է դատական կարգով վիճարկման ենթակա չլինելու հարցը, ինչը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների զարգացումը և կատարումը խոչընդոտող ամենալուրջ գործոններից է: Այս փաստարկի էությունն այն է, որ դատարանները և քվադիդատական ինստիտուտները չեն կարող դատական քննության առնել տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, քանի որ դրանք վերաբերում են քաղաքականության մասին որոշումներին և գտնվում են օրենսդրի և գործադիր գործառնության դաշտում և ոչ՝ դատարանների, և որ դատարանները (կամ որևէ միջազգային վերահսկողական ատյան) չեն կարող տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտի քաղաքականության մշակումը վերցնել կառավարություններից²¹:

Սրա հակափաստարկը ձևակերպվել է հետևյալ եզրերով.

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին վերաբերող պահանջների դատական քննությունը չի պահանջում դատարաններից վերցնել կառավարություններից քաղաքականության մշակումը: Դատարանները չունեն նման հակվածություն և ոչ էլ՝ դա անելու ինստիտուցիոնալ կարողություն: Փոխարենը՝ ճիշտ այնպես, ինչպես քաղաքացիական և քաղաքական իրավունքների պարագայում, դատարանները և տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դատական քննություն իրականացնող մարմինները վերանայում են կառավարությունների որոշումները՝ ապահովելու, որ դրանք համահունչ լինեն մարդու հիմնարար իրավունքներին: Եթե հաջողվում է կառավարություններին հաշվետու դարձնել մարդու իրավունքների (քաղաքացիական և քաղաքական կամ տնտեսական, սոցիալական և մշակութային) հարցերում, ապա դա նպաստում է ժողովրդավարության ամրապնդմանը, այլ ոչ՝ խաթարում այն»²²:

Նույն կերպ էլ Կոմիտեն նկատել է, որ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դասակարգումը որպես դատական կարգով վիճարկման չենթակա կամայական է և «Էականորեն սահմանափակում է առավել խոցելի և զրկյալ խմբերի իրավունքները պաշտպանելու՝ դատարանների կարողությունը²³»:

Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիայի շրջանակներում զարգացած դատական պրակտիկան նույն ոգով մերժել է տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դատական կարգով վիճարկելի չլինելու մասին փաստարկը, ինչպես որ դա արել են ներպետական դատարանները. Զարավ-Աֆրիկյան Զանրապետության Սահմանադրական դատարանը, այս իրավունքների դատական կարգով վիճարկման ենթակա

²⁰ Մարդու իրավունքների ոլորտում վերահսկողական այլ մարմիններ, օրինակ՝ Եվրոպական սոցիալական հանձնաժողովը ևս զգալի ներդրում են ունեցել տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պարզաբանման գործում:

²¹ R. Beddard and D. Hill (eds) "Economic, Social and Cultural Rights: Progress and Achievement" (Macmillan, 1992):

²² Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի Կամբոյի արձանագրության կոալիցիայի փաստաթերթիկ թիվ 7, «Դատական կարգով վիճարկելիության հարցը», 3-րդ պարբ.:

²³ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 9, 10-րդ պարբ.:

չլինելու մասին փաստարկը մերժող առաջատար դատարաններից է եղել²⁴: Այսպիսով՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների՝ դատական վիճարկման ենթակա չլինելու մասին փաստարկն այլևս հիմնավոր չի դիտարկվում միջազգային իրավունքում:

Երրորդ փաստարկն ընդդեմ այս իրավունքների սահմանադրական երաշխիքների այն է, որ ի տարբերություն քաղաքացիական և քաղաքական իրավունքների, որոնք հիմնականում պետություններից պահանջում են «նեգատիվ պարտականություններ»՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները պահանջում են «պոզիտիվ պարտականություններ», և, հետևաբար, այս իրավունքներն ավելի շատ ռեսուրսներ են պահանջում, քան քաղաքացիական և քաղաքական իրավունքները և կարող են պրոգրեսիվ կերպով ապահովվել՝ կախված ռեսուրսների առկայությունից²⁵: Դաշնագրով այս իրավունքների մասով պետությունների պարտականությունների կատարումը պայմանավորված է ռեսուրսների առկայությամբ և պահանջն այն է, որ պետությունները «պրոգրեսիվ կերպով ապահովեն» այս իրավունքները²⁶: Չնայած համակողմանիորեն փաստարկվել է, որ քաղաքացիական և քաղաքական որոշ իրավունքների պաշտպանությունը ևս ռեսուրսներ է պահանջում,²⁷ հասկանալի է, որ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանությունն ընդհանուր առմամբ ավելի ռեսուրսատար է: Սա մեծապես ազդել է այս իրավունքների լիարժեք զարգացման և իրականացման վրա հատկապես զարգացող երկրներում: Կոմիտեն, սակայն, այն դիրքորոշման է, որ այս տարբերությունները չպետք է դիտարկվեն որպես պետությունների դաշնագրային պարտավորությունները չեղարկող: Ըստ այդմ, Կոմիտեն մատնանշել է, որ «մինչ Դաշնագիրը պահանջում է պրոգրեսիվ իրականացում և ճանաչում առկա ռեսուրսներով պայմանավորված սահմանափակումները, այն նաև նախատեսում է մի շարք պարտականություններ, որոնք պետք է գործեն անմիջականորեն»²⁸: Օրինակ՝ արհմիություններ կազմավորելու և արհմիությունների միանալու յուրաքանչյուրի իրավունքը (8-րդ հոդված) անմիջական գործողության իրավունք է:

Դաշնագրով ստանձնած պետությունների պարտականություններն ընկալվում են որպես «վարքագծային պարտականություններ» և «արդյունքի պարտականություններ»²⁹: Մինչ Դաշնագրի կողմ հանդիսացող պետությունների կողմից 2(1)-րդ հոդվածով ստանձնած «քայլեր ձեռնարկելու» պարտականությունը «վարքագծի պարտականություն» է և պետք է գործի

²⁴ Տես մասնավորապես՝ Soobramoney v Minister of Health, KwaZulu Natal 1997 (12) BCLR 1696 and The Government of the Republic of South Africa and others v Grootboom, 2000 (3) BCLR 277(C): Տես նաև COHRE, Leading Cases on Economic Social and Cultural Rights: Summaries, Working Paper 3 (ESC Rights Litigation Programme, COHRE (2006)

<http://www.cohre.org/view_page.php?page_id=62#1368>accessed 21 Nov 2006.

²⁵ Տես Ph. Alston and G. Quinn, "The Nature and Scope of State Parties' Obligations under the ICESCR" (1987), 9 Human Rights Q 156-229-րդ էջեր:

²⁶ ՏՄԻԴ, 2-րդ հոդված: Տես նաև HJ Steiner and P. Alston, International Human Rights in Context: Law, Politics, Morals (2nd ed., OUP, 2000):

²⁷ Տես, օրինակ, M. Craven, 15-րդ էջ:

²⁸ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 3, 1-ին պարբ.:

²⁹ Տես Միջազգային իրավունքի հանձնաժողովի զեկուլյը (1977) 2 Ybk of the Intl L. Com. 20, 8-րդ պարբ.:

անմիջականորեն, համապատասխան իրավունքների իրականացումը դեպքերի մեծ մասում «արդյունքի պարտականություն է», որին կարելի է հասնել պրոգրեսիվ կերպով³⁰: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն հետևյալ եզրերով է սահմանել «վարքագծի պարտականությունը».

«Մինչ խնդրո առարկա իրավունքների լիարժեք իրականացմանը կարելի է հասնել պրոգրեսիվ կերպով, համապատասխան պետությունները պետք է ձեռնարկեն նպատակին հասնելուն ուղղված քայլերը Դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո ողջամտորեն կարճ ժամկետներում: Այս քայլերը պետք է լինեն մտածված, կոնկրետ և հնարավորինս ուղիղ միտված լինեն Դաշնագրով ճանաչված պարտականությունների կատարմանը: Քայլեր ձեռնարկելու պարտականության կատարման համար օգտագործվող միջոցները մատնանշված են 2(1)-րդ հոդվածում՝ ներառելով նաև օրենսդրական միջոցները»:³¹

Կոմիտեն անդրադարձել է նաև պետության պարտավորությունների բնույթին՝ ընդգծելով, որ «պետության ձեռնարկած բոլոր պատշաճ միջոցները, այդ թվում՝ օրենսդրական» ներառում են նաև սահմանադրական դրույթների ամրագրումը³²:

Կոմիտեն նաև բացատրել է «արդյունքի պարտականությունը» և իրավունքների պրոգրեսիվ իրականացումը հետևյալ եզրերով.

«Այն փաստը, որ իրավունքների իրականացումը ժամանակի մեջ, կամ, այլ կերպ ասած՝ պրոգրեսիվ կերպով, նախատեսված է Դաշնագրով չպետք է մեկնաբանել այնպես, որ տվյալ պարտականությունը զրկվի իր իմաստալից բովանդակությունից: Այն մի կողմից ճկունության անհրաժեշտ հնարք է, որն արտացոլում է իրական աշխարհի իրողությունները և այն բարդությունները որոնք ծառացած են յուրաքանչյուր պետության առջև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ապահովման ճանապարհին: Մյուս կողմից, այս ձևակերպումը պետք է ընթերցել Դաշնագրի ընդհանուր նպատակի լույսի ներքո, որպիսին է անդամ պետությունների համար հստակ պարտականությունների սահմանումը խնդրո առարկա իրավունքների լիարժեք իրականացման մասով: Դաշնագիրն, ըստ այդմ, պարտականություն է նախատեսում հնարավորինս արագորեն և արդյունավետորեն հասնելու այդ նպատակին: Ավելին, միտումնավոր կերպով ձեռնարկված հետընթաց միջոցները կպահանջեն մեծ շրջահայացություն, և կարիք կլինի դրանք հիմնավորել Դաշնագրով նախատեսված իրավունքների ամբողջականության տեսանկյունից և առավելագույն առկա ռեսուրսների լիարժեք օգտագործման համատեքստում»³³:

Այսպիսով՝ իրավունքների պրոգրեսիվ իրականացման սկզբունքը ենթադրում է նաև, որ պետությունը պետք է գերծ մնա հետընթաց կամ ռեգրեսիվ քայլեր ձեռնարկելուց, որպիսին է նաև իրավունքի ավելի բարձր մակարդակից ավելի ցածր մակարդակի անցումը:

³⁰ Տես P. Alston and G. Quinn-ը վերևում, 107-109-րդ էջեր:

³¹ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 3, 2-րդ և 3-րդ պարբերություններ:

³² Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն թիվ 3, <https://www.refworld.org/pdfid/4538838e10.pdf>:

³³ Նույն տեղում, 9-րդ պարբ.:

Ժողովրդավարությունը և սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանությունը

Միջազգային իրավական խոսույթում գնալով ավելի մեծ տեղ է հատկացվում ժողովրդավարությանը, ընդ որում՝ մեկնաբանները և քաղաքականություն մշակողները հակված են միավորելու ժողովրդավարությունը և մարդու իրավունքները որպես մեկ նույնական գաղափար և գործելակարգ³⁴: Այս միավորումը հիմնված է ժողովրդավարության և մարդու իրավունքների մասին թյուր պատկերացումների վրա, որոնք սահմանափակում են այս երկուսը հասարակության քաղաքացիական և քաղաքական ոլորտների հետ ասոցացվող ինստիտուտներով և գործողություններով: Արդյունքում՝ ժողովրդավարությունն ընկալվում է որպես ընտրություններ և նվազագույն ինստիտուցիոնալ դաշտ, իսկ մարդու իրավունքներն առաջին հերթին ընկալվում են որպես քաղաքացիական և քաղաքական իրավունքներ³⁵:

Ժողովրդավարության և մարդու իրավունքների այս միևնույնության ընկալումը միջազգային իրավունքում խնդրահարույց է, քանի որ հաշվի չի առնում մարդկային փորձառությունն իր ամբողջության մեջ և խարխուլում է երկու գաղափարների խորքային բնույթը: Եվ ժողովրդավարությունը և մարդու իրավունքներն իրենց արմատներում ունեն անհատի և հասարակության բարեկեցությունը: Երբ ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին մոտենում են միևնույնության տեսանկյունից, կորցնում են այդ հասկացությունների խորքային ընկալումը, քանի որ դրանք դադարում են անհատի և հասարակության հզորացմանը և մարդու արժանապատվությանը ծառայելուց: Փոխարենը՝ միևնույնության ընկալումը ամրապնդում և լեգիտիմացնում է անհավասար ուժային հարաբերությունները, որտեղ ուժեղների՝ պետության, պետության ներսում ձևավորված մեծամասնության կամ հզոր փոքրամասնական խմբերի, շահերն առաջնահերթ են դիտարկվում այն անհատների շահերի և կարիքների նկատմամբ, որոնք ուժ ունեցողների խմբից չեն: Այս վերջին խմբերն, ընդհանուր առմամբ, հայտնի են որպես ունեզուրկների կամ խոցելի կամ մարգինալացված խմբեր: Ժողովրդավարությունը և մարդու իրավունքները, որպես կանոն, ներկայացվում են որպես բոլորին հասու զորեղացման խոստում, սակայն միևնույնության պատկերացումների պարագայում դրանց ազատագրող ներուժը կորում է, և այս երկու գաղափարները պարզապես դառնում են անհավասար ստատուս քվոյի պահպանման գործիքներ:

Միջազգային իրավունքի՝ ժողովրդավարության միևնույնության ընկալման միտումը զարմանալի չէ, երբ դիտարկվում է միջազգային համակարգի ընդհանուր զարգացումների ավելի լայն համատեքստում: 1990-ական թթ. աշխարհում ժողովրդավարության զարգացման վրա ազդել էր

³⁴ Այս զարգացման մասին ավելի համակողմանի պատկերացում կազմելու համար տես՝ T. Evans, "If Democracy, Then Human Rights?" (2001) 22 Third World Q, p. 623, Also N Gleditsch. "Democracy and Peace: Good News for Human Rights Advocates". In D Gomien (ed) Broadening the Frontiers of Human Rights; Essays in Honour of Ashbjorn Eide (Scandinavian university, 1993) pp 287-288; T. Carothers. "Democracy and Human Rights: Policy Allies or Rivals?" (1994) 17 Washington Q pp 109-120.

³⁵ D Beetham, Democracy and Human Rights (Polity Press, 1999), 115-118-րդ էջեր:

Արևմուտքի, այսպես կոչված, գաղափարախոսական հաղթանակը³⁶: Սա նշանակում էր, որ մարդու իրավունքների թեմայով գերակա տեսակետները սահմանափակվում էին քաղաքացիական և քաղաքական իրավունքներով, ժողովրդավարությունը դիտարկվում էր որպես առաջնորդների ընտրության գործընթաց և մրցակցային ազատ շուկայական համակարգեր, որոնք գերիշխող են տնտեսության և հասարակության մնացած բոլոր ասպեկտների կազմակերպման գործում³⁷: Այս ընդհանուր տեսակետը, որտեղ հիմնական շեշտադրումը կապիտալի օգտագործման և ռեսուրսների բաշխման արդյունավետության ձգտող շուկայական մեխանիզմների վրա էր, հայտնի է որպես նեոլիբերալ մտածողություն: Սա նշանակում է, որ պետությունը փոքր դեր է կատարում այն հարցում, թե ինչպես են հասարակության մեջ բաշխվում ապրանքներն ու ծառայությունները, քանի որ դա առաջնայնորեն անում է շուկան: Այստեղ շեշտը դրվում է նրա վրա, որ շուկան ամենաարդյունավետ եղանակով է բաշխում ռեսուրսները, ինչն էլ իր հերթին ամենաարդյունավետ եղանակով է ապահովում տնտեսական աճը, որն անհրաժեշտ է բարեկեցիկ հասարակություններ կառուցելու համար: Ժողովրդավարությունը, նեոլիբերալ մտածողության նպատակներից ելնելով, սահմանափակվում է քաղաքական առաջնորդների ընտրությամբ, քանի որ հասարակությունում կայացվող մնացած բոլոր որոշումների խթանը շուկայական մեխանիզմներն են: Մարդու իրավունքների պաշտպանությունը սահմանափակվում է քաղաքացիական և քաղաքական իրավունքներով և չի տարածվում սոցիալ-տնտեսական իրավունքների վրա, քանի որ հակառակի դեպքում հնարավոր կլիներ ազդել շուկայի վրա³⁸:

Շուկայի միջոցով հասարակության համար ավելի մեծ բարեկեցություն ապահովելու վրա կենտրոնացումը իրապես բերում է բազմազան օգուտներ, սակայն սա նաև նշանակում է, որ այն անձինք, որոնք չեն համապատասխանում շուկայի մոդելին, որպիսիք են՝ չքավորները, գործազուրկները, հիվանդները, հաշմանդամություն ունեցողները, նպատակադրված ձևով դուրս են մղվում³⁹: Սա գնահատվում է որպես երկարաժամկետ արդյունավետության հասնելու կարճաժամկետ գինը⁴⁰: Չնայած ներկայումս աշխարհում առկա չէ շուկայի մաքուր մոդել, սոցիալական ապահովության այն համակարգերը, որոնք ստեղծվել են հակակշռելու շուկայի բացասական ազդեցությունը, ստեղծվել են միևնույն ժամանակյա պայմաններով և անպայմանորեն չէ, որ հասցեագրում են ունեզուրկների և ուժեզուրկների կարիքները: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն բացահայտորեն նշել է, որ ապավինումը շուկայական մեխանիզմներին միշտ չէ, որ հնարավորություն է ընձեռում լավագույնս բավարարելու անհատի կարիքները և ապահովելու մարդու իրավունքների արդյունավետ իրականացումը⁴¹: Կոմիտեն շարունակաբար ընդգծել է սոցիալ-

³⁶ Stuu` F. Fukuyama, *The End of History and the Last Man* (Penguin, 1992):

³⁷ Stuu` S. Marks, *The Riddle of All Constitutions: International Law, Democracy and the Critique of Ideology* (OUP, 2000):

³⁸ Stuu R Falk, *Human Rights Horizons: The Pursuit of Justice in a Globalizing World* (Routledge, 2000), էջ 90:

³⁹ Stuu` J Donnelly, "Human Rights, Democracy and Development" (1999) 21, *Human Rights Q*, 628-629 էջեր:

⁴⁰ Նույն տեղում, 629-630 էջեր:

⁴¹ Stuu` Ընդհանուր մեկնաբանություն թիվ 5-ը, 11-12-րդ պարբերություններ:

տնտեսական իրավունքներին պատշաճ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը և կոչ արել պետություններին հանձնառություններ ստանձնել սոցիալական ինտեգրման, սոցիալական համերաշխության, հավասարության, և սոցիալական ապահովության ոլորտներում⁴²: Այս գաղափարները հակասում են մրցակցային ազատ շուկայի հիմնական գաղափարներին⁴³: Այդ պատճառով էլ դժվար է համոզել պետություններին ընդունելու այս գաղափարները՝ հաշվի առնելով նեոլիբերալ գաղափարների տարածվածությունը: Այդուհանդերձ, ընդունել շուկաների գերակայությունը և որդեգրել մինիմալիստական մոտեցում ժողովրդավարության և մարդու իրավունքների նկատմամբ կնշանակի ընդունել հասարակության որոշակի շերտերի մարգինալացումը և հավերժացնել կառուցվածքային անհավասարությունը, մի բան, որը հակոտնյա է ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին⁴⁴: Հետևաբար, անհրաժեշտ է ձևավորել ժողովրդավարության և մարդու իրավունքների, ինչպես նաև դրանց փոխհարաբերությունների առավել համակողմանի ընկալում, որով մինիմալիստական մոտեցումները կճանաչվեն ոչ պատշաճ այն պատճառով, որ հաշվի չեն առնում մարդկության փորձառությունն իր ամբողջության մեջ և կպաշտպանեն մարդու զորեղացմանը նպաստող գաղափարները:

Հասկանալիորեն քաղաքացիական և քաղաքական իրավունքները ժողովրդավարության անքակտելի մասն են կազմում, քանի որ, օրինակ, խոսքի, միավորումների ազատությունների և անձնական անձեռնմխելիության բացակայությունը կհակասի ժողովրդավարական կարգին: Առանց այս ազատությունների հնարավոր չի լինի ապահովել նույնիսկ նվազագույն մասնակցություն և ժողովրդական վերահսկողություն իշխանության նկատմամբ: Սոցիալ-տնտեսական իրավունքները և ժողովրդավարությունը նույնպես փոխկախյալ են, քանի որ այս իրավունքների երկարատև չապահովումը խաթարում է ժողովրդավարական հասարակարգում քաղաքական հավասարության հիմնական դրույթները և արդյունավետ ժողովրդավարական ինստիտուտների կենսունակությունը⁴⁵: Այս առնչությամբ ժողովրդավարության ընկալումը պետք է լինի այնպիսին, որ «ընդլայնվեն քաղաքական գործընթացներում ժողովրդական մասնակցության հնարավորությունները և վերջ դրվեն այնպիսի սոցիալական գործելակարգերին, որոնք սխտեմատիկորեն մարգինալացնում են որոշ քաղաքացիների՝ զորեղացնելով մյուսներին»⁴⁶: Եվ սա մեծապես պայմանավորված է սոցիալ-տնտեսական իրավունքների կարևորությունն ապահովելով այն հաշվառմամբ, որ «ժողովրդավարության մեջ ներակա հավասարության սկզբունքը ոչ միայն ենթադրում է «մեկ անձ, մեկ քվե», այլև «մեկ անձ, մարդավայել ապրուստի մեկ հավասար իրավունք»⁴⁷:

⁴² Ընդհանուր մեկնաբանություն թիվ 2, 9-րդ պարբ., Ընդհանուր մեկնաբանություն թիվ 3, 12-րդ պարբ., Ընդհանուր մեկնաբանություն թիվ 6՝ 17-րդ պարբ.՝ տարեցների առնչությամբ:

⁴³ A. Eide and A. Rosas, "Economic, Social and Cultural Rights: A Universal Challenge", in A. Eide et al (eds), *Economic, Social and Cultural Rights: A Textbook* (2nd edn, Nijhoff, 2001), 5-րդ էջ:

⁴⁴ Donnelly, 618-619 էջեր:

⁴⁵ Beetham, 114-րդ էջ:

⁴⁶ Steu` S. Marks վերնում, 109-րդ էջ:

⁴⁷ C Macpherson, *Democratic Theory: Essays in Retrieval* (OUP, 1973), 51-րդ էջ:

Ինչպես նշվեց վերևում, մարդու իրավունքների և ժողովրդավարության ընկալումը և կիրառումը հասարակության քաղաքացիական և քաղաքական ոլորտներով սահմանափակելը չի ճանաչում մարդկային փորձառությունն իր ամբողջության մեջ: Անհրաժեշտ է մարդկային գոյությունը դիտարկել իր ամբողջության մեջ, որտեղ տարբեր անձինք ունեն տարբեր կարիքներ: Մի մասը գուցե կարիք ունենա, որ պաշտպանվի կառավարության դեմ բողոքելու իրենց իրավունքը, մյուսները գուցե կարիք ունենան պաշպանվել կամայական ձերբակալությունից կամ ապօրինի կալանավորումից, մյուսներն էլ կարող են կարիք ունենալ աշխատանքի կամ առողջապահության մատչելիության: Այս բոլոր դեպքերն էլ ենթադրում են ժողովրդավարության ընկալում, որը վեր կլինի միևնույն ժամանակյա պատկերացումներից: Ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքները նպաստում են, որ անհատը կարողանա ներագդել այն գործընթացների վրա, որոնք ազդեցություն ունեն իր կյանքի վրա: Օրինակ՝ հասարակությունում առկա կառուցվածքային անհավասարությունները, որոնք ազդում են կանանց վրա, առավել ակնառու են սոցիալ-տնտեսական ոլորտում: Դրանք էլ, իրենց հերթին, խոչընդոտում են հանրային կյանքին, այդ թվում՝ քաղաքականությունների մշակմանը և որոշումների կայացմանը մասնակցելու՝ կանանց կարողությանը⁴⁸: Սոցիալ-տնտեսական իրավունքների արդյունավետ խթանման ու պաշտպանության ապահովումը տալիս է անձանց բավարար կենսամակարդակի և արժանապատիվ կյանք ապրելու հնարավորություն: Սրանք էլ իրենց հերթին դնում են անձի ազատության և անկախության հիմքը՝ թույլ տալով անձին որպես հասարակության մաս մասնակցելու հանրային կյանքին և որոշումների կայացման գործընթացին⁴⁹:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և հայ ժողովրդի համար սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների կենսական կարևորության պատմական/ավանդութային ասպեկտները

Այս նյութի շրջանակներում անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ նաև մարդու իրավունքների միջազգային իրավունքում անկյունաքարային հանդիսացող երեք հիմնարար փաստաթղթերի ընդունման գործընթացին և հայ ժողովրդի համար սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների կարևորության պատմական կամ միգուցե ավանդութային ասպեկտներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմին անմիջապես հաջորդող ժամանակահատվածում Միավորված ազգերի կազմակերպությունն, ըստ Էության, համատեղ ձեռնարկ էր, մի կողմից՝ արևմտյան պետությունների, և մյուս կողմից՝ սոցիալիստական ճամբարի պետությունների միջև՝ դրա շրջանակներում ընդունված փաստաթղթերն, ըստ Էության, փոխզիջումների արդյունք էին: Այս տրամաբանության մեջ են ընդունվել նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և երկու հայտնի դաշնագրերը: Այսինքն՝ դրանք եղել են այդ երկու ճամբարներին հարող պետությունների միջև լուրջ բանակցությունների և փոխզիջումների արդյունք:

⁴⁸ Montreal “Principles on Women’s Economic, Social and Cultural Rights” (2004) 26 Human Rights Q, 762րդ էջ:

⁴⁹ A. Eide, “Economic, Social and Cultural Rights as Human Rights”, in Eide et al (eds) 18-19րդ էջեր:

Մինչ խորհրդային Միությունը և նրա դաշնակիցները ջատագովել են սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների ամրագրումը պլանավորված Յճակագրի և հետագա պայմանագրերի տեքստերում, արևմտյան ճամբարի պետությունները, ցանկանալով հավատարիմ մնալ իրենց սեփական սահմանադրական ավանդույթներին, փորձել են այդ տեքստերում ամրագրել այն իրավունքները, որոնք իրենք են պատմականորեն կարևոր համարել⁵⁰: Եվ հաջողության հասնելու համար երկու կողմերն էլ արել են զիջումներ: Եվ ըստ էության, հայ ժողովրդի կյանքում սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների կենսական կարևորության ակունքները պետք է դիտարկել նաև վերոհիշյալ պատմական իրողությունների համատեքստում:

Մարդու իրավունքները համընդհանուր են, անբաժանելի, փոխկախյալ և փոխկապված

Մարդու իրավունքների վերաբերյալ համաշխարհային քննարկումներում կարևոր է արձանագրել նաև Վիեննայում 1993թ. կայացած Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդածողովի բեկումնային դերը: Այդ խորհրդածողովում ընդունված հռչակագիրն ըստ էության երկու էական ամրագրում արեց:

Առաջինը՝ որ մարդու իրավունքների համընդհանուր բնույթը չի կարող հարցականի տակ դրվել⁵¹: Եվ երկրորդ՝ որ «մարդու բոլոր իրավունքները համընդհանուր են, անբաժանելի, փոխկախյալ և փոխկապված» և «մինչ ազգային և տարածաշրջանային առանձնահատկությունները և զանազան պատմական, մշակութային և կրոնական նախադրյալները հաշվառման ենթակա են, պետությունների պարտականությունն է, անկախ նրանց քաղաքական, տնտեսական և մշակութային համակարգերից, խթանել և պաշտպանել մարդու բոլոր իրավունքները և հիմնարար ազատությունները»⁵²:

Մարդու իրավունքները համընդհանուր են, քանի որ վերաբերում են բոլոր մարդկանց, որոնք բոլորն էլ պետք է կարողանան իրականացնել դրանք: Մարդու իրավունքներն անբաժանելի են, քանի որ դրանք ներակա են մարդու արժանապատվությանը, և չեն կարող ունենալ որևէ աստիճանակարգություն: Մեկ իրավունքի մերժումը հանգեցնում է մյուս իրավունքներից օգտվելու անհնարինությանը: Եվ վերջապես մարդու իրավունքները փոխկախյալ և փոխկապված են, քանի որ դրանցից յուրաքանչյուրը նպաստում է մարդու արժանապատվության դրսևորմանը մարդու զարգացման, ֆիզիկական, ֆիզիոլոգիական և հոգևոր կարիքների բավարարման միջոցով: Եվ մեկ իրավունքի իրականացումը հաճախ մասամբ կամ ամբողջովին կախված է այլ իրավունքների իրականացումից:

Ամփոփելով՝ խորհրդի անդամների քննարկմանն ու քվեարկությանն են ներկայացնում հետևյալ հարցադրումները.

⁵⁰ Christian Tomuschat, *Human Rights: Between Idealism and Realism*, 2014, (OUP), 30-32-րդ էջեր:

⁵¹ Vienna Declaration and Programme of Action, 1-ին պարբ., <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/vienna-declaration-and-programme-action>:

⁵² Նույն տեղում, 5-րդ պարբ.:

1. Արդյոք կողմ եք, որպեսզի արդար և նպաստավոր աշխատանքային պայմանների իրավունքն ամրագրվի ՀՀ Սահմանադրության մարդու հիմնական իրավունքների և ազատությունների գլխում՝ որպես մարդու հիմնական իրավունք:
2. Արդյոք կողմ եք, որպեսզի սոցիալական ապահովության իրավունքն ամրագրվի ՀՀ Սահմանադրության մարդու հիմնական իրավունքների և ազատությունների գլխում՝ որպես մարդու հիմնական իրավունք:
3. Արդյոք կողմ եք, որպեսզի ընտանիքի պաշտպանության իրավունքն ամրագրվի ՀՀ Սահմանադրության մարդու հիմնական իրավունքների և ազատությունների գլխում՝ որպես մարդու հիմնական իրավունք:
4. Արդյոք կողմ եք, որպեսզի բավարար կենսամակարդակի իրավունքն ամրագրվի ՀՀ Սահմանադրության մարդու հիմնական իրավունքների և ազատությունների գլխում՝ որպես մարդու հիմնական իրավունք:
5. Արդյոք կողմ եք, որպեսզի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման իրավունքն ամրագրվի ՀՀ Սահմանադրության մարդու հիմնական իրավունքների և ազատությունների գլխում՝ որպես մարդու հիմնական իրավունք:
6. Արդյոք կողմ եք, որպեսզի մշակութային կյանքի և գիտական առաջընթացի առավելություններից օգտվելու իրավունքն ամրագրվի ՀՀ Սահմանադրության մարդու հիմնական իրավունքների և ազատությունների գլխում՝ որպես մարդու հիմնական իրավունք:

Եթե խորհուրդը որոշի, որ այս փուլում նման դետալային քվեարկության կարիք չկա, ինչպես նաև նկատի ունենալով այն, որ մարդու հիմնական իրավունքների գլխում հնարավոր է ներառվեն նաև այլ սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներ՝ որպես քվեարկության հարց կարելի է ձևակերպել հետևյալը.

Արդյոք կողմ եք, որ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում անդրադարձ կատարվի սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքները մարդու հիմնական իրավունքների գլխում վերականգնելու հարցին: